ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3301, ք. Կապան, Չարենցի 1
հեռ. /+37460/720072
էլ.փոստ kapanmayor@gmail.com, info@kapan.am

3301 г.Капан, Чаренца 1
тел. /+37460/720072
e-mail: kapanmayor@gmail.com, info@kapan.am

11 դեկտեմբերի 2025թ. N Ե-13/4795
Ձեր _____ N _____

«ՆԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ 2025» ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, գ.Նալբանդյան
2-րդ թաղ 2-րդ փող. տուն 5

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին)

Կապանի համայնքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի և «Նազարյան Շին 2025» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Կարեն Նազարյանի միջև 2025 թվականի հոկտեմբերի 02-ին կնքվել է «Մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման (Թումանյան փողոց 14/1) աշխատանքների» N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-25/23 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.3, 8.1 կետերի և Պայմանագրի անբաժանելի մաս կազմող օրացուցային գրաֆիկի համաձայն՝ մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման (Թումանյան փողոց 14/1) աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել կողմերի ստորագրման պահից 60 օրացուցային օր:

«Նազարյան Շին 2025» ՍՊԸ նշված ժամկետում և այնուհետև աշխատանքներ չի իրականացրել:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ:

Համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 տոկոսի չափով:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 5376000 (հինգ միլիոն երեք հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ: Տուգանքի չափը կազմում է 26880 (քսանվեց հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ Կապանի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է Կապանի համայնքապետարանի, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի և «Նազարյան Շին 2025» ՍՊԸ-ի, ի դեմս տնօրեն Կարեն Նազարյանի միջև 2025 թվականի հոկտեմբերի 02-ին կնքված «Մարզադաշտի տրիբունայի և պահեստի կառուցման (Թումանյան փողոց 14/1) աշխատանքների» N ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-25/23 ծածկագրով գնման պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Նազարյան Շին 2025» ՍՊԸ-ին տրվում է ժամկետ՝ մինչև 2025 թվականի դեկտեմբերի 22-ը ներառյալ՝ սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900315201120 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 1034415 (մեկ միլիոն երեսունչորս հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ և որպես պայմանագրի ապահովման գումար՝ 689610 (վեց հարյուր ութսունինը հազար վեց հարյուր տասը) ՀՀ դրամ ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900315201120 հաշվեհամարին փոխանցելու համար:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «Նազարյան Շին 2025» ՍՊԸ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ**

Կատ.՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան՝ Անետ Փարսադանյան